Հաշվետվություն

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի 2025 թվականի իրականացված միջոցառումների

Գիտական ուսումնասիրություններ

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական ուսումնասիրություններն ուղղված են «Խոսրովի անտառ» պետական արգելոցի, «Խոր Վիրապ» և «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերի բուսական և կենդանական աշխարհի գենոֆոնդի պահպանմանն ու նրանց էկոհամակարգերի ուսումնասիրմանը:

Բոլոր աշխատանքները կատարվել են համաձայն 2025 թվականի աշխատանքային ծրագրերի և տարեկան միջոցառումների պլանի:

ա) Խոշոր կաթնասուն կենդանիների հաշվառում

Գիտական բաժնի կողմից շարունակվում են որոշ տեսակի ողնաշարավոր կենդանիների և գիշատիչ թռչունների (սև անգղ, սպիտակագլուխ անգղ, գիշանգղ, մորուքավոր անգղ, քարարծիվ) կենսաէկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրման և հաշվառման աշխատանքները:

Կենդանիների պոպուլացիային և միգրացիոն ուղիներին հետևելու համար Բնության համաշխարհային հիմնադրամի /WWF/ հետ համատեղ շարունակվում է տեսա և ֆոտոբռնիչների օգնությամբ կատարել կենդանական աշխարհի սեզոնային միգրացիայի և հաշվառման աշխատանքներ: Այդ նպատակով արգելոցի տարածքում տեղադրվել են 6 նոր ֆոտոբռնիչներ: Այժմ տարածքում առկա է 30 ֆոտոբռնիչներ :

Կենդանիների տարածվածության, տեսակային կազմի, քանակի, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակի մոնիթորինգի տվյալների ստացման նպատակով ստուգվել են տեղամասերում առկա բոլոր ֆոտոբռնիչները: Ստուգվում են 2-3 ամիս պարբերականությամբ, ինչը թույլ է տալիս հաշվարկել կենդանիների ֆիքսվելու հաճախականությունը կոնկրետ տարածքում: *(նկար 1)*

Նկար 1

Վերջիններից ստացված տվյալների համաձայն որոշ կենդանիների համար կատարվել են քանակի մոտավոր հաշվարկներ և ֆիքսվելու հաճախականությունը կոնկրետ տարածքներում:

Կենդանատեսակների թվաքանակ մոնիտորինգ ըստ ֆոտոթակարդների

ֆոտոթակարդ	Կենդանիների տեսակ											
	Կովկասյան ընձառյուծ	Բեզոարյան այծ	Գորշ արջ	Լիս	Լուսան	Աղվես	Նապաստակ	Անտառային կատու	Փորսուկ	Քարտեզամարտ	Աքիս	Վայրի խոզ
1	0	10	10	1	10	2	4	0	1	0	6	12
2	0	12	4	1	8	3	5	0	1	2	1	5

3	0	2	7	5	1	0	6	0	3	0	0	14
4	0	14	12	1	3	1	3	0	2	2	2	10
5	0	7	5	4	0	4	2	0	3	0	0	11
6	0	2	5	2	3	4	4	0	5	1	3	9
7	0	17	2	2	9	2	2	0	3	1	3	2
8	0	10	0	5	0	0	2	0	0	0	3	0
9	0	7	9	6	0	0	2	0	0	1	0	8
10	1	6	0	0	0	3	0	0	1	0	3	12
11	0	20	10	5	0	2	2	0	1	3	3	13
12	0	0	13	10	7	0	9	0	6	1	4	14
13	0	14	14	0	3	3	0	0	0	0	3	6
14	0	19	5	0	4	6	0	1	0	3	6	2
15	0	16	8	12	3	0	1	0	1	0	6	2
16	0	11	13	11	12	0	4	0	1	0	0	9
17	0	19	5	0	6	8	0	0	0	10	1	2
18	0	8	0	7	10	7	0	0	4	2	5	8
19	0	1	0	4	10	4	1	0	0	0	1	13
20	0	12	9	4	0	0	0	0	0	0	0	8
21	0	12	8	7	10	0	4	0	0	1	0	2
22	0	12	8	6	0	0	0	0	4	3	0	5
23	0	0	1	5	0	1	0	0	2	0	0	9
24	0	0	6	14	0	0	0	0	0	0	0	10
25	0	2	12	9	0	0	1	0	0	0	0	3
26	0	0	14	12	5	2	1	0	0	2	0	2
27	0	8	3	0	9	0	0	0	0	0	0	2
28	0	5	5	3	1	0	1	0	0	0	0	2
29	0	5	2	0	1	2	0	0	1	0	0	3
30	0	2	0	0	2	0	0	0	1	0	0	4

Մոնիտորինգն իրականացվել է ֆոտոթակարդների և տեսանկարահանման կադրերի միջոցով:

Հունվար և փետրվար ամիսների ընթացքում ֆոտոթակարդները կրկին նկարահանել են կովկասյան ընձառյուծին (Նկ. *Panthera pardus tulliana*): Դաշտային ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել են գիշատչի կենսագործունեության հետքեր: Վերլուծությունից պարզ է դարձել, որ ընձառյուծի արեալը հիմնականում ընդգրկում է պետական արգելոցի «Խոսրով» և «Կաքավաբերդ» տեղամասերը: Ընձառյուծը էկոհամակարգի անհրաժեշտ մասնակից է՝ պահպանելով ընձառյուծին պահպանում ենք նրա որս հանդիսացող կենդանատեսակները:

Նկար 2

Կատարվել է բեզոարյան այծերի *(Capra aegagrus)* հաշվառում: Դիտարկումների համար ուսումնասիրվել են երկու տարածքներ՝ «Խոսրով» և «Խաչաձոր» տեղամասերը:

Նկար 3

Վայրի խոզը հիմնականում նկատվել է լայնատերև անտառում: Համեմատական ցուցանիշներ անցկացնելով նախորդ տարիների հետ վայրի խոզերի պոպուլացիայում դիտվում է աճի միտում:

Դաշտային ուսումնասիրությունների ընթացքում լուսան արձանագրվել է պետական արգելոցի Խոսրով և Խաչաձոր տեղամասերում :

Նկար 4

Գորշ արջը հիմնականում հանդիպել է չորային նոսրանտառներում: Տարածքը ներառում է այն վայրերը, որտեղ աճում են պտղատու ծառեր, հատապտուղներ և ընկուզենիներ, որոնցով արջը սնվում է:

Նկար 5

Երկրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի աշխատակիցները «Խոսրովի անտառ» պետական արգելոցում իրականացրել են միջատների ուսումնասիրություն :

Նկար 6

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական Գիտությունների Ինստիտուտի աշխատակիցները «Խոսրովի անտառ» պետական արգելոցի «Խաչաձոր» տեղամասում կատարել են հնէաբանական և շերտագրական ուսումնասիրություններ:

Նկար 7

բ) Գիշատիչ թռչունների թվաքանակի և տեսակային կազմի որոշում

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում շարունակվում են գիշատիչ թռչունների որոշ տեսակների (սև անգղ, սպիտակագլուխ անգղ, գիշանգղ, մորուքավոր անգղ, քարարծիվ) ուսումնասիրությունները: Աշխատանքներն իրականացվում են Գերմանիայի բնության պահպանության միության հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ գիշատիչ թռչնատեսակների բնադրման վայրերի ուսումնասիրության ծրագրի շրջանակներում: Բների գրանցումն իրականացվում է կանոնավոր շրջայցերի ժամանակ, որի ընթացքում ստուգվում են հին բները և գրանցվում են նոր հայտնաբերվածները:

Ուսումնասիրությունները կատարվել են պետական արգելոցի «Խոսրով» և «Կաքավաբերդ» տեղամասերում: Արձանագրվել են սև անգղի *(Aegypius monachus)*, սպիտակագլուխ անգղի *(Gyps fulvus)*, մորուքավոր անգղի *(Gypaetus barbatus) և* քարարծվի, գիշանգղի *(Neophron percnopterus)* գործող բներ:

«BirdsLink Armenia» կազմակերպության նախագահ Կարեն Աղաբաբյանի կողմից կազմակերպվել է թռչնադիտարկման տուր «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

Նկար 8

գ) Սողունների որոշ տեսակների տարածվածության և դրանց քարտեզագրման աշխատանքների իրականացում

Սողունների ֆաունան արգելոցում բավական բազմազան է: Ուսումնասիրությունները կատարվել են դիտարկումների մեթոդով, որի ընթացքում արձանագրվել են կովկասյան ագամա, անդրկովկասյան մողեսիկ, հազվագյուտ և անհետացող տեսակներից գրանցվել է միջերկրածովային կրիա /Testudo graeca/: Արգելոցի տարածքում գետերի ափամերձ տեղամասերում գրանցվել է սովորական լորտու և ջրային լորտու: Գյուրզայի ինչպես նաև իժերի ապրելավայրերն օջախային բնույթ են կրում և կախված են ժամանակավոր և մշտական ապաստարանների և կերի առկայությունից:

դ) *Վեդի և Խոսրով գետերի ձկնատեսակների ուսումնասիրում (կարմրախայտ, քուռի բեղլու)*

Գիտական բաժնի կողմից շարունակվում են ուսումնասիրվել Վեդի գետի ձկնապաշարների նվազման հիմնական պատճառները: Վեդի գետում առկա են բազմաթիվ արհեստական եղանակով առաջացած ջրվեժներ, որոնք խոչընդոտում են ձկների սեզոնային միգրացիային:

Վեդի գետի վրա կառուցված ջրընդունիչ ամբարտակները խոչընդոտ են հանդիսանում ձկների տեղաշարժի համար, որոնք հանդիսանում են նվազեցման հիմնական պատճառներից մեկը, որոնց վերաբերյալ բազմիցս ահազանգվել է:

ե) Հավաքված բուսատեսակների (հերբարիումների) գույքագրում, տեսակային կազմի որոշում և քարտադարանի ստեղծում

Բուսաբանական բաժնում շարունակվում է հերբարիումների գույքագրման, կարման և համարակալման աշխատանքները:

«Բույսերի բազմազանության մշտադիտարկումը ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում» ծրագրի շրջանակում, «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի աշխատակիցները կատարեցին հետազոտական աշխատանքներ բոլոր տեղամասում:

Ուսումնասիրվել են նախկինում տեղադրված փորձահրապարակները՝ նպատակ ունենալով գնահատել բուսական բազմազանության պահպանումը և դրա դինամիկ փոփոխությունները ժամանակի ընթացքում:

նկար 9

զ) Պետական արգելոցի թանգարանի և գիտական լաբորատորյայի աշխատանքների կազմակերպում և իրականացում

Թանգարանային ցուցանմուշների պահպանման և պատշաճ ցուցադրման նպատակով կատարվել են ախտահանման աշխատանքներ:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի թանգարանն ունեցել է 1890 այցելու:

Էկոլոգիական կրթության ու դաստիարակության նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 60 էկոկրթական միջոցառում, որի արդյունքում 1700 դպրոցականների համար կազմակերպվել են բնապահպանական թեմաներով սեմինար-քննարկումներ, իսկ գիտելիքների ամրապնդման նպատակով՝ թեմատիկ խաղեր (խաչբառ, հանելուկ և այլն):

ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրիայի մի խումբ ուսանողներ այցելել են <<Խոսրովի անտառ>> պետական արգելոցի հրաշագեղ անկյուններից մեկը՝ Վահագնի և Աստղիկի ջրվեժներ:

Նկար 10

Երևանի պետական հումանիտար-տեխնիկական քոլեջի «Զբոսաշրջություն» և « Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտությունների առաջինից չորրորդ կուրսի ուսանողները այցելել են Աղջոց Վանք և Աստղիկի ջրվեժ:

Այցի ընթացքում ուսանողները ծանոթացան արգելոցի հարուստ կենսաբազմազանությանը, հայկական միջնադարյան ճարտարապետությանը, վայելեցին բնության հիասքանչ տեսարաններն:

Նկար 11

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ը նաև հյուրընկալել է Չարենցավանի թիվ 2 հիմնական դպրոցի 8-րդ դասարանի աշակերտներին:
Աշակերտները այցելել են արգելոցի «Խոսրով» տեղամաս՝ բացահայտելու բնության հրաշալիքները:

Նկար 12

Էկոզբոսաշրջության կազմակերպման և զարգացման աշխատանքներ

Էկոզբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումներն ու աշխատանքները կատարվել են համաձայն 2025 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում զբոսաշրջային այցեր իրականացվել են «Խոսրովի անտառ» արգելոցի «Գառնի» և «Խոսրով» տեղամասերում գտնվող երթուղիներով: Այցելուների անվտանգության և արգելոցային ռեժիմի առանձնահատկություններով պայմանավորված «Կաքավաբերդ» տեղամասի որոշ երթուղիները փակ են այցելությունների համար:

Այցելուների անվտանգությամբ և արգելոցային ռեժիմով պայմանավորված՝ քայլարշավային երթուղիները պատշաճ կերպով վերահսկվում են, կազմակերպվում են աղբահանության աշխատանքներ, այցերը կանոնակարգվում են բնական էկոհամակարգերի վրա զբոսաշրջության հնարավոր ազդեցության բացառման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում համագործակցության շրջանակներում իրականացվել են զբոսաշրջային այցեր ինչպես նոր, այնպես էլ հին գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ:

Հաշվետու ժամանակահատվածում «Խոսրովի անտառ» պետական արգելոցն ունեցել է 2515 այցելու: